

IMRE MADÀCH

ՄԱՐԴՈՒՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1969, ք. 1-3, էջ 61)

ՏԵՍԻՆ 2.

Հոռի մէջ: Բաց գաւիք մը աստուածներու արձաններով, գարդի ա-
նօքներով՝ որոնց մէջ բուրումնաւէտ նիւթեր կը վառին. տեսարանը կը բաց-
ուի դէպի Ապենինեանները: Մէջտեղը պատրաստ սեղան մը՝ երեք ընկողմնա-
րաններով: Աղամ՝ իբր Սերկիոյս, Արուսեակ՝ իբր Միլոյ եւ Կատուլոս գո-
վողներ. Եւա՝ իբր Յուլիա, Հիպպիա եւ Կլուվիա հովանաւորներ՝ մեղկ հա-
գուստներով, շուայտանք կ'ընեն: Ամպիոնի մը վրայ սրամարտիկներու խաղը
կը կատարուի, ստրուկներ՝ հրամանի պատրաստ կեցած. սրինգահարներ կը
նուագեն: Մայրամուտ, ապա գիշեր:

ԿԱՏՈՒԼՈՍ

Տե'ս, Սերկիոյ, ո՞րքան ժիր է եւ ճարպիկ
Սրամարտիկն այս կարմրորակ երիզով,
Գրաւի կու դամ թէ կը յաղթէ այդ միւսին:

ԱԴԱՄ

Ո՛հ, Հերակլէս վկայ:

ԿԱՏՈՒԼՈՍ

Ա՛հ, ի՞նչ Հերակլէս,
Աստուածներուն դեռ ո՞վ հաւատք կ'ընծայէ:
Ըսէ՛ Յուլիա, պիտ' աւելի հաւատամ:

ԱԴԱՄ

Այնպէս ըլլայ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Երդումըդ է հաստատուն,
Կեղծ աստուածով՝ աստուած մը կեղծ փոխելով:
Ըսէ՛ սակայն, երդումդ ի՞նչպէս հասկնանք,
Գեղեցկութիւնն անոր, թէ սէրդ իր հանդէպ,
Կամ թէ անոր հաւտարմութիւնն հանդէպ քեզ:

ԿԱՏՈՒԼՈՍ

Անցաւոր է գեղը, նոյն իսկ թէ չըլլայ՝
Վաղը պիտի յոգնիս անկէ որ այսօր
Քեզ կը դրաւէ, եւ նորութեան դիւթանքով՝
Նըւաղ գեղով կին մը պիտի հրապուրէ:

ԱԴԱՄ

Հաւտարմութիւնն իր կ'իմանամ: Ո՞վ, ըսէք,
Կը շոյլէ իր կնոջ համար աւելի:

ՀԻՊՊԻԱ

Ո՛հ, միամիտ, կրնա՞ս անվերջ զինք դուռել:
Թէ կրնայիր ալ, բայց դուն որ կը տենչաս
Անյաղելի հաճոյքներուն, ունայն տեղ
Կը տուայտիս, չէ՞ որ մէկ մէկ մասը լոկ
Բաժան բաժան՝ իւրաքանչիւր կնոջ մէջ
Պիտի կրնաս դուն հաճոյքէն ունենալ:
Մինչ մտային տիպը գեղին, հաճոյքին,
Միշտ գերթ դիւթանք մ'անհաս առջեւդ կը փալփի.
Եւ ի՞նչ դիտնաս, քմահաճոյք մը արդեօք,
Սրամարտիկի մը մկաններն ջախջախուած,
Կամ ցնորք մ'ալ չհրապուրէ նաեւ զինք:

ԱԴԱՄ

Ճիշտ է, ճիշտ է ալ կը բաւէ Հիպպիա:
Հաճոյքն ինչո՞ւ գերթ Տանտալոս կը քաշէ,
Զօրութիւնն երբ Հերակլէսին կը պակսի,
Քանի փոխուի իբրեւ Պրոտեւս չենք կրնար.
Մինչ արհամարհ գերի մը յետ շարթուան
Տաժանանքի՝ ժամ մ'այնպիսի կը վայելէ՝
Իր տէրը դոր ընդունայն տեղ կը ցանկայ:
Կամ թէ արդեօք խոնջին համար ումպ մը ջո՞ւր
Հաճոյքն է լոկ, եւ մահ անոր որ անյաղ
Կը խոյանայ ալիքներուն մէջ անոր:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ի՞նչ փառաւոր բարոյական դաս մ'է սա,
Կուրծքերուն վրայ աղջկներու գեղանի,
Եւ ծաղկազարդ բաժաններով: Գրա՞ւրդ բայց:

ԱԴԱՄ

Եթէ չահիս՝ քուկըդ ըլլայ Յուլիա:

ԿԱՏՈՒԼՈՍ

Ապա թէ ես կորսնցնե՞մ:

ԱԴԱՄ

Իմս է ձիդ:

ԿԱՏՈՒԼՈՍ

Չորս շարաթէն կրնաս կանչել, կամ թէ ոչ՝
Նետել կու տամ օձաճուկի լճիս մէջ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Տե՛ս, Յուլիա, ձուկն այս համեղ եւ պարարտ.
Կե՛ր, քանի որ ուրիշ մը պիտ' չլիքցնես:

Ե Ի Ա

Պիտի չուտե՞նք քեզ ալ որդեր դարչելի:
Ուրախանայ ողջը, իսկ թէ չի կրնար՝
Գէթ կշտացած լի բերանով քրքջայ: (Կը խմէ):

ԱԴԱՄ

(Սրամարտիկին)

Ինքզինքդ, է՛՛յ, ուժով պահէ:

ԿԱՏՈՒԼՈՍ

Օ՛ն, զա՛րկ քաջ:

(Կատուլոսի սրամարտիկը կ'իյնայ եւ կեանքին համար պաղատելով, մատը կը բարձրացնէ: Ադամ գրութեան նշանը կ'ուզէ տալ, բայց Կատուլոս ձեռքը կը բռնէ եւ բռնեցքը սեղմած, բութամատը դէպի սրամարտիկը կը ցցէ):

Երկաթը քեզ. — ալլասերած, վատասիրտ:
Շատ ստրուկներ ունիմ ես դեռ, ազա՛հ չեմ.
Ո՞վ այս փոքրիկ եւ վրդովիչ տեսարանն,
Սիրուն տիկնայք, ձեզմէ պիտի խնայէր.
Չէ՞ որ համբոյր է քաղցրագոյն եւ տենչն ալ
Աւելի ջերմ՝ երբ քիչ մ'արիւն է թափած:
(Մինչ այս, ախոյեանը կը սպաննէ սրամարտիկը):

ԱԴԱՄ

Ձիդ իմըս է. եկո՛ւր Յուլիա դրկէ զիս:
Դիակը դո՛ւրս: — Ա՛լ կը բաւէ այսօրուան:
Պարաւորնե՛ր, աղուոր խաղ մը սարքեցէ՛ք:
(Դիակը դուրս կը տանին, բեմը պարաւորները կը գրաւեն):

ԿԱՏՈՒԼՈՍ

Եկո՛ւր դուն ալ, իմ Կլուկիաս. չեմ կրնար
Երկար դիտել, որ ուրիշներ դրկուին:

ԱՐՈՒՍԵԱԿ

Չհետեւի՞նք մենք ալ իրենց, Հիպպիա.
Բայց նախ շրթներդ լղէ՛, վրդան չըլլայ թոյն:
Լաւ, արդ կրնանք զուարճանալ, աղանձիս:

ԱԴԱՄ

Սիրտդ ինչո՞ւ այնքան ուժգին կը զարնէ,
Չեմ կրնար վրան հանգստանալ, Յուլիա: (Կը փափսան):

ԱՐՈՒՍԵԱԿ

Խենթին լսէ, սրտի մասին կը խօսի:

ԿԱՏՈՒԼՈՍ

Տե՛ս, սիրելիս, ես չեմ դաշիր քու սրտիդ,
Համբոյրդ թէ միշտ տաք, պատրաստ է ինծի՝
Ուղածդ ըրէ՛, կը բաւէ՝ ես չգիտնամ:

ԿԼՈՒՎԻԱ

Շա՛տ վեհանձն ես, կենացդ ըլլայ այս դիմին: (Կը խմէ):

ԿԱՏՈՒԼՈՍ

Լաւ, Կլուլիա, բայց բազումները փափուկ
եւ կուրծքը դիրք չհեռացնես դուն ինձմէ.
Տե՛ս, պսակս ալ զլիւնս արդէն վար կ'իյնայ:

(Պարուհիներուն)

Սքանչելի՛ դարձուածք մ'է սա ձեր պարին.
Լի հեշտանքի կրակով, կցուած հաճոյքին:

ԿԼՈՒՎԻԱ

Կը ծածկեմ աչքը, եթէ դուն հոն կը դանես՝
Որուն համար ոգևոլ չափ ես կը մրցիմ.
Անոյ՛ խօսքի մ'ալ չեմ դառնար արժանի:

(Արուսեակը ցուցնելով)

Լաւագոյն է, նայէ թթու այդ դէմքին:
Ինչո՞ւ անոր դեղատեսիլ աղջիկն այդ,
Երբոր անկէ օգտուիլ ալ չի կրնար,
Եւ կը թողու որ մրափէ. ինքը մինչ
Պաղ աչքերով եւ հեզնական ժպիտով՝
Կը հետեւի բիւր քաղցր՝ բայց սին բաներ,
Որ խնջոյքին բոյրը կու տան ու համեմ:

ԿԱՏՈՒԼՈՍ

Իրօք, նման դէմք մը ամբողջ մեր խումբին
Աւելին վրայ պաղ վարագոյր կը ձգէ:
Վայրկեաններու կախարդանքին դիմադրողն՝
Որ չի թողուր հոգին սուղուիլ յորձանքէն,
Լաւ մարդ ալ չէ, թող տուն մնար այնպիսին:

ՀԻՊՊԻԱ

Ստուգապէս, գրեթէ արդէն կը վախճամ,
Թէ խեղճին մէջ թափանցած է մահը սեւ՝
Որ քաղաքնիս կը դարձնէ անապատ:

ԱԴԱՄ

Մեկդի՛ պատկերն այս սգաւոր: Կրակոտ երգ,
Տեսնենք, ձեզմէ երգ մը աղուոր ո՞վ դիտէ:

ՀԻՊՊԻԱ

(Կ'երգէ)

Գինուով, սէրով
Պէտք չէ երբեք յադենալ.
Ամէն բաժակ
Տարբեր տարբեր համ ունի:
Գինովութիւն,
Գինովութիւնը անոյ՛,
Կ'ոսկեզօծէ
Մեր դոյութիւնն անցաւոր,
Ինչպէս արփին
Գերեզմաններն աւերակ:
Գինուով, սէրով
Պէտք չէ երբեք յադենալ.
Ամէն աղջիկ
Դիւթանք մ'ունի այլադան:
Գինովութիւն,
Գինովութիւնը անոյ՛,
Կ'ոսկեզօծէ
Մեր դոյութիւնն անցաւոր,
Ինչպէս արփին
Գերեզմաններն աւերակ:

ԿԱՏՈՒԼՈՍ

Շա՛տ աղուոր: Իսկ դուն ի՞նչ դիտես, Կլուլիա:

ԿԼՈՒՎԻԱ

(Կ'երգէ)

Ժամանակին աշխարհը շատ յիմար էր.
Երբոր սիրուն ասպետ այցի էր եկեր
Լուկրետիայի այրութեան անկողնին,
Հաճոյք չուէց, հուր չտուաւ չրթունքին,
Բացած կուրծքով նա հանրատուն չվազեց,
Այլ պաղ երկաթ ինքնիր սրտին մէջ մղեց:

ԱՄԷՆՔԸ

Այսօր աշխարհս իմաստնաւորն է, հրճուինք.
Երանի՛ մեզ, որ ասոր մէջ մենք կ'ապրինք:

ԿԼՈՒՎԻԱ

Ժամանակին աշխարհը էր շատ յիմար.
Բրուտոս չմնաց ամառանոցն իր պայծառ,
Այլ սուր առած պատերազմի մեկնեցաւ,
Վարձկան մը զերթ. եւ ի՞նչ վախճան ունեցաւ...
Բարօրութեան համար անարգ ամբողջին՝
Թափեց արիւնն ռազմադաշտի երեսին:

ԱՄԷՆՔԸ

Այսօր աշխարհս իմաստնազոյն է, հրճուինք.
Երանի՛ մեզ, որ ասոր մէջ մենք կ'ապրինք:

ԿԼՈՒՎԻԱ

Ժամանակին աշխարհը շատ յիմար էր.
Դիւցազներու միտքը ցնորքով էր լեցուեր,
Սրբազան էր, որուն վրայ կը ծիծաղինք.
Նման խենթեր եթէ այսօր գտնէինք՝
Կրկէսներուն պիտ' ըլլային շատ զիպան,
Գազաններուն կերակուր, մեզ տեսարան:

ԱՄԷՆՔԸ

Այսօր աշխարհս իմաստնազոյն է, հրճուինք.
Երանի՛ մեզ, որ ասոր մէջ մենք կ'ապրինք:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ա՛խ, Կլուվիա, Հիպոկրատի յաղթեցիր.
Ես կ'ուզէի երգիւ ըլլալ յօրինող:

ԱԴԱՄ

Ինչո՞ւ տրտում ես. չե՞ս երգեր Յուլիա:
Մեր շուրջ ամէնքն ուրախ են ու ծիծաղկոտ:
Ձե՞ս ախորժիր արդեօք հանդէլի կուրծքիս վրայ:

Ե Ի Ա

Ո՛հ, շատ. բայց ինձ ներէ՛, խնդրեմ, Սերկիո՛ւ,
Երջանկութիւնն քանի կ'ընէ զիս խոհուն,
Կը թուի թէ ժպտունը չէ հարազատ:
Կը խառնուի չիթ մը վշտէն անպատում՝

Մեր քաղցրազոյն ըողէներուն մէջ անդամ,
Կը զգանք դուցէ թէ այդ ըողէն — ծաղիկ մ'է.
Ուստի խամբող:

ԱԴԱՄ

Նման բան մ'ալ ես կը զգամ:

Ե Ի Ա

Երբ մանաւանդ երգ կը լսեմ ու նուազ,
Ձեմ ունկնդրեր սահմանափակ բառերուն,
Թրթրոցումն երգին զերթ նաւ կ'որորէ,
Կը զգամ՝ կարծես երազի մէջ ըլլայի,
Եւ թռչէի ձայնին վրայէն թրթրոցուն՝
Հեռո՛ւ, հեռո՛ւ, դէպի նախնի անցեալներ,
Ուր արմաւի ծառերուն տակ արեւշող՝
Անմեղ էի ես, կենսուրախ, մանկական.
Ազնուական, մեծ էր կոչումն իմ հողոյս:
Ներէ՛, յիմար անուրջ մըն է այս զիւթանք,
Համբոյր մ'ալ քեզ դարձեալ — ահա կ'արթնամ:

ԱԴԱՄ

Մեկդի՛ նուազ, պարն ալ մեկդի՛. սիրտ կ'առնէ
Յաւերժական այս քաղցրահամ ովկիան:
Դառնութիւն է որ կը ցանկայ սիրտըս արդ,
Գինիիս մէջ օշինդըր, խայթ շրթներուն
Վերայ կարմիր, վրտանդ մ'ահեղ գլխուս վրայ:

(Պարաւորները կը հեռանան, դուրսէն վայնասուն մը կը լսուի):

Ի՞նչ վայնասուն ուղեղացունց է ասի:

ԱՐՈՒՍԵԱԿ

Նոր կը խաչեն խելագարներ մէկ քանի,
Եզրայրութիւն եւ իրաւունք երազող:

ԿԱՏՈՒԼՈՍ

Արժանի են, ինչո՞ւ տուն չեն մընացած՝
Վայելելով եւ ողջ աշխարհ մոռնալով:
Ուրիշի գործն ինչո՞ւ զուր տեղ կը խառնեն:

ԱՐՈՒՍԵԱԿ

Մուրացկանն իրր եզրայր կ'ըղձայ մեծատունն,
Փոխէ դերերն՝ ան քեզ պիտի խաչ հանէ:

ԿԱՏՈՒՂՈՍ

Թշուառութեան, իշխանութեան վրայ խնդանք,
Եւ ժանտախտի վրայ քաղաքնիս սպառող,
Աստուածներու վրճիռներուն վրայ համայն: (Նոր վայնասուն):

ԱԴԱՄ

(Ինքնիրեն)

Կը զգամ՝ կարծես երազի մէջ՝ ըլլայի,
Եւ թռչէի ձայնին վրայէն թրթռուն՝
Հեռո՛ւ, հեռո՛ւ, դէպի նախնի անցեալներ,
Ազնուական, մեծ էր կոչումն իմ հոգւոյս:
Ո՛հ, Յուլիա, այսպէս չըսե՞ր:

Ե Ի Ա

ձի՛շտ, այո՛:

(Կը մթնայ: Կամարակապի առջեւէն յուղարկաւորներ կ'անցնին սրինգներով,
ջահերով եւ լալկան կիներով: Ամբողջ խումբը ժամանակ մը անշարժ ու
լուռ կը մնայ):

ԱՐՈՒՍԵԱԿ

(Քրքջալով)

Ուրախութիւնն անհետացաւ, կը տեսնեմ.
Ծաղրը հատաւ, գուցէ զինի ալ չկայ,
Որ մինչեւ իսկ «թթուած դէմքն» ալ ձանձրանայ:
Մէկը մեղմէ արդեօք կը զգա՞յ ահուդող,
Կամ թերեւս դարձի եկած է յանկարծ:

ԱԴԱՄ

(Բաժակը անոր նետելով)

Գնա՛, կորի՛ր, եթէ այդպէս կը կարծես:

ԱՐՈՒՍԵԱԿ

Լաւ, այն ատեն ձեզի նոր հիւր մը կանչեմ,
Գուցէ դառնայ երիտասարդ խանդն իրմով:
Է՛յ, ծառաներ, փութանակի ներս բերէ՛ք
Այս կողմերէն ճամբորդողն՝ այն ջահերով.
Թող հրամցնենք իրեն բաժակ մը խմիչք:

(Մենելը բաց դագաղի մէջ դրած ներս կը բերեն եւ սեղանին վրայ կը գետեղեն:
Յուղարկաւորները ետեօք կը կենան: Արուեսակ բաժակ կը բարձրացնէ):

Խմէ՛, ընկեր, այսօր քեզի, վաղը ինձ:

ՀԻՊՊԻԱ

Կը նախընտրե՞ս արդեօք համբոյր մը ինծմէ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Գնա՛, դրկէ՛, դողցի՛ր բերնէն բընիոնն:

ՀԻՊՊԻԱ

Թէ համբուրեմ ըղբեղ, ինչո՞ւ զինքը ոչ:

(Մենելը կը համբուրէ, Պետրոս առաքեալ խումբէն առաջ կու գայ):

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Կեցի՛ր, կեցի՛ր. ժանտախտը դուն կը ծծես:

(Ամէնքը սարսափած իրենց տեղերէն կը բարձրանան):

ԱՄԷՆՔԸ

Ժանտա՛խտը, ո՛հ: — Սարսափելի՛. — հեռացէ՛ք:

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ա՛յ, դու զաւակ թշուառական, — վատ սերունդ,
Բախտը մինչեւ ժպտի քեզի, ճանձ մ'ինչպէս
Արեւշողին մէջ հեզներով լրբօրէն՝
Կը կոխկռտես բարոյական եւ Աստուած.
Դրանըդ սակայն վտանգը երբ կը բախէ՝
Եւ Աստուծոյ մատը հզօր հասնի քեզ,
Անարդարար եւ յուսահատ կը կծկիս:
Չե՞ս զգար՝ որ կը ծանրանայ քու վըրադ
Պատիժն երկնի: Շուրջդ նայէ՛, աչքդ բա՛ց,
Քաղաքդ անչէն կը դառնայ, ու ցանքդ ոսկի
Կոխան կ'ընէ աղբ մը օտար ու կոպիտ:
Կը քայքայուի կարգը, չկայ հրամայող,
Ո՛չ հպատակ: Սպանութիւն, դողութիւն
Ազատօրէն կ'երթեւեկին քաղքիդ մէջ,
Հողը թողլով իրենց ետին ու սարսափ:

Ո՛չ օգնութիւն, ո՛չ դուրս երկրէ, երկընքէն:
Հաճոյքներու արբեցութեամբ չի լըռեր
Այդ կոչը՝ որ քեզ կը ցնցէ կուրծքիդ տակ,
Ձուր մղելով դէպ՝ լաւազոյն նպատակ:
Միայն զգուանք կ'արթնցնէ, ոչ յազուրդ
Քու սրտիդ մէջ հաճոյքը մեղի, այնպէս չէ՞:
Եւ մտահոգ չուրջ կը նայիս վեհերոտ,
Ձուր ամէն բան, աստուածներուդ քու նախնի
Ձեռ հաւատար, վաղ քար դարձած են անոնք:

(Աստուածներու արձանները կը փշրուին):

Կը փշրուին եւ նոր աստուած չես գտներ,
Որ խարամէն բարձրացնէ քեզ դարձեալ:
Աչք մը նետէ՛, քաղաքըդ ո՞վ անապատ
Կը դարձնէ ժանտախտէն ալ աւելի:
Կ'ելլեն փափուկ բազմոցներէն հազարներ,
Որ լեցնեն ճգնաւորներ զերթ վայրազ
Թերայիտի անապատներն ընդարձակ,
Հոն փնտռելով զգացումներու բթացած
Բան մը զրգոյիչ, որ տակաւին բարձրացնէ:
Այլասերած սերունդ, պիտի կորսուիս
Մեծ աշխարհի այս մաքրուող երեսէն:

ՀԻՊՊԻԱ

(Սեղանին առջեւ քաւալելով)

Վա՛յ ինձ, ո՛հ, վա՛յ, դարհուրելի ի՛նչ ցաւեր,
Կրակը կիզիչ դժոխքի եւ պաղ քրտինք:
Ժանտախտը, ո՛հ, ժանտա՛խտն, ահա կը մեռնիմ:
Ոչ մէկերնի՞դ կը խնամէ զիս, որ այնքան
Հաճոյքներու մասնակցեցանք միասին:

ԱՐՈՒՍԵԱԿ

Այսօր քեզի, վաղը ինձի, սիրելիս:

ՀԻՊՊԻԱ

Սպաննեցէ՛ք, անէծքըս կամ ձեր վըրայ:

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

(Իրեն մօտեցալով)

Մի՛ անիծեր, զուտը, ներէ՛ մանաւանդ.
Պիտի խնամեմ ըղբեզ եւ ու մեծն Աստուած,
Յաւերժական Աստուած՝ սիրոյ անարատ:

Իրեն դարձիր, եւ այժմ ահա այս ջրով՝
Հողիդ խկոյն սրբուած մեղքի խարամէն,
Պիտի թռչի իրեն:

(Կը մկրտէ զինք սեղանին վրայէն առած անօթով մը):

ՀԻՊՊԻԱ

Հայր իմ. — Թեթեւցայ: (Կը մեռնի):

ԿԱՏՈՒԼՈՍ

(Ճամբայ ելլելով)

Ես այսօր իսկ պիտի մեկնիմ Թերայիտ:
Ա՛լ զգուեցայ այս մեղաւոր աշխարհէն:

ԿԼՈՒՎԻԱ

Կեցի՛ր, ես ալ կ'ընկերեմ քեզ, Կատուլոս: (Կ'ելլեն):

ԱԴԱՄ

(Մտախոհ կու գայ տեսարանին առջեւ, եւան ալ իրեն կը հետեւի):

Դուն դեռ հո՞ն ես, Յուլիա, եւ ի՞նչ կը փնտռես՝
Ուր մահն արդէն ուրախութիւնն է խեղդած:

ԵԻԱ

Տեղըս հոն չէ՞ ուր որ դուն ես, Սերկիոյ:
Եւ ի՞նչ ազնիւ զգացումներ կուրծքիս տակ
Պիտի գտած ըլլայիր դուն, ո՛հ, արդեօք,
Ուր անցաւ հաճոյքներ լոկ փնտռեցիր:

ԱԴԱՄ

Եւ իմ մէջս ալ, ափսո՛ս, լոկ զայն փնտռեցի:
Թշուառաբար եւ փոքրոգի կորսուիլ՝
Ի դուր կրելով. թէ կենդանի է Աստուած՝

(Կը ծնրադրէ ձեռքերը երկինք բարձրացնելով):

Թ՛ իշխանութիւն ու խնամք ունի մեր վըրայ,
Նոր ազգ բերէ, նոր պաղափար աշխարհիս,
Առաջինով՝ ներարկելու նոր արիւն
Այլասերած ժողովուրդին ախտաւոր.
Մինչ երկրորդով՝ որ ունենան նոր ոլորտ

Լաւազոյններն սլանալու բարձրագոյն :
 Ինչ որ մերն էր, կը զգամ, համակ մաշեցաւ,
 Եւ չունինք ոյժ ծնունդ տալու մենք նորին .
 Ո՛հ, Աստուած իմ, քեզ կ'աղերսեմ, լսէ՛ ինձ :

(Երկնքին մէջ լուսապսակով խաչը կ'երեւի : Լեռներու ետեւէն հրդեհուած
 քաղաքներու կարմրութիւնը կը տեսնուի : Լեռներու գագաթներէն կ'իսապալ-
 քենի գունդեր կ'իջնեն : Հեռուէն ջերմեռանդն շարական մը կը լսուի) :

ԱՐՈՒՍԵԱԿ

(Ինքնիրեն)

Կը փշաքաղէ կռնակըս այս տեսարանն .
 Մարտս սակայն մարդուն դէմ չէ՞ ապաքէն :
 Եւ ինչ որ ես չկրցայ՝ նա պիտ' ընէ ,
 Նման խաղեր ստէպ տեսած եմ արդէն :
 Լուսապսակն երբ մթաղնի յամբարար ,
 Կը մնայ միշտ՝ փայտը խաչին արիւննուշտ :

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ձայնդ լսեց Աստուած . նայէ՛ շուրջդ, ահա
 Դարձեալ երկիրն այլասերած կը ծլի :
 Որոնք հրդեհ քաղաքներուդ կու տային ,
 Նժոյգներով կը կոխէին առաթուր
 Յանքերն անցեալ դարերու եւ իբր ախոռ
 Կը գրաւէին ունայնացած տաճարներ ,
 Երակներուն մէջ հիւանդոտ, ազազուն ,
 Աւիչ ահա եւ թարմ արիւն կը բերեն :
 Կրկէսին մէջ որոնք կ'երգեն շարական՝
 Մինչ ամեհի վազը կուրծքնին կը պատռէ ,
 Աչխարհացունց դաղափարներ կը սփռեն .
 Եղբայրութիւն, ազատութիւն անհատին :

ԱԴԱՄ

Կը զգամ՝ հողին ուրիշ բան ալ կը տենչայ ,
 Ո՛չ լոկ վայելք սնարներու վրայ ուռած ,
 Դանդաղօրէն արիւնաքամ ըլլալ, ո՛հ ,
 Հաճոյք մըն է , որուն չկայ հանդուժանակ :

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Վախճանդ ուրեմն, փառքը ըլլայ Աստուծոյ .
 Քեզի վաստակ : Անհատն ըլլայ թող ազատ

Արժեցնել՝ ինչ որ իր մէջն է թաքուն .
 Մէկ օրէնքէն լոկ կաշկանդուած . այն է սէր :

ԱԴԱՄ

Օ՛ն ուրեմն, ողբերուիլ, օ՛ն, ի մարտ ,
 Այս նոր ուսման համար : Կերտել նոր աշխարհ ,
 Որուն լոյսն է ասպետական արութիւն ,
 Քնարերգութիւնն ալ, խորանին առնթեր ,
 Տիպը կընոջ, դերբնականի բարձրացած :

(Պետրոսի վրայ յեմած համբայ կ'ելլէ) :

ԱՐՈՒՍԵԱԿ

Անկարելին կ'ողբերէ քեզ, Ադամ :
 Արժանի է այր մարդուն եւ փառաւոր .
 Հաճոյ Տիրոջ, քանի երկինք կ'ուղղէ քեզ .
 Դեւին ալ, զի վըհատութեան կը տանի :

(Իրենց ետեւէն կ'երթայ) :

(Շար. 6)

Հունգար բնագրէն քարգմանեց
 Հ. Ա. Ծ.